Պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2024 թվականի տեղեկատվական հարցումների տվյալների

Վանաձոր 2025

Հեղինակ՝ Զենֆիրա Վարդանյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության ֆինանսական աջակցությամբ: Սույն տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Նախաբան

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, մարդու իրավունքների պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով, տեղեկատվական հարցումներ է ուղարկում պետական տարբեր կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին: Ստացված տեղեկություններն օգտագործվում են կազմակերպություն դիմած քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման կամ նրանց իրավունքի իրականացմանն ուղղված իրավական խորհրդատվության նպատակով: Այդ հարցումերին ի պատասխան ստացված գրությունները հնարավորություն են տալիս գնահատելու պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկության տրամադրման՝ օրենքով սահմանված նորմերի կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների տեսանկյունից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շուրջ 10 տարի իրականացնում է նման ուսումնասիրություն և այս տարիների ընթացքում տեխնոլոգիական փոփոխությունների արդյունքում տեղեկատվության շրջանառությունը դարձել է ավելի դյուրին՝ ժամանակի խնայողության տեսանկյունից:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն էականորեն կրճատել է տեղեկատվական հարցումների ուղարկման և դրանց պատասխանների ստացման ժամանակահատվածները, քանի որ փոստային ծառայության համար նախատեսված 7 օրերը նույպես կրճատվել են: Արձանագրենք, որ պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարցումներին մեծամասամբ պատասխանել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները պահպանելով: Կազմակերպության կողմից հերթական ուսումնասիրությամբ ներկայացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կատարման վիճակը 2024թ.-ին՝ համաձայն ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ստացած պատասխանների:

Ուսումնասիրման մեթոդաբանությունը

Պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների կատարման վերլուծության նպատակով կազմակերպությունը մշակել և կիրառում է հետևյալ մեթոդաբանությունը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տեղեկատվական հարցումները հիմնականում ուղարկվել են էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, այն է՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում:

Այդ մարմիններից ստացված պատասխանները, միաժամանակ հնարավորություն են տալիս գնահատելու նրանց կողմից տեղեկության տրամադրման՝ օրենքով սահմանված նորմերի կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների տեսանկյունից:

Հավաքագրված տեղեկությունը դասակարգվել է հետևյալ խմբերի՝

Ժամանակին ստացված են համարվում հարցումների այն պատասխանները, որոնք կազմակերպությունն ստացել է՝ էլեկտրոնային տարբերակի դեպքում 5 օրյա ժամկետում, փոստային ծառայության միջոցով 12 օրյա ժամկետում:

Ուշացած են համարվում օրենքով սահմանված, ինչպես նաև կազմակերպության կողմից ողջամիտ համարվող ժամկետների խախտմամբ ստացված պատասխանները:

Չպատասխանված են համարվում այն հարցումները, որոնց ընդհանրապես պատասխան չի տրվել՝ սույն տեղեկանքը հրապարակելու օրվա դրությամբ:

Տեղեկատվության բազան ստեղծվում է հետևյալ կերպ. հարցումների պատասխանները, ստացվելուն պես, մուտքագրվում են ՀՔԱՎ գրասենյակի հարցումների էլեկտրոնային բազա, որտեղ նշվում են հարցումների պատասխանների հասցեատերը, ուղարկողը, ուղարկման ամսաթիվը, հարցումների պատասխանների էլեկտրոնային տարբերակը: Աղյուսակը հասանելի է միայն ՀՔԱՎ գրասենյակի աշխատակազմին, կազմակերպության կողմից պահպանվում են տեղեկատվական անվտանգության կանոնների և անձնական տվյալների գաղտնիության պահպանման նորմերը: Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա, տարեկան կտրվածքով, կազմվում է կատարված հարցումների վիճակագրություն:

2024թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկվել է 1281 գրություն, որոնցից 293-ը (22.88%) տեղեկատվական հարցումները հասցեագրվել են պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին. (2023թ. ուղարկված գրությունների թիվը կազմել է 1046, որոնցից 462-ը (44,18%) տեղեկատվական հարցում):

Աղյուսակ 1.Կառույցներ, որոնց ուղարկվել է առավել մեծ թվով գրություններ

2023թ		
Կառույց	թիվ	%
Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ	105	22.73%
Պաշտպանության նախարարություն	63	17.97%
ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ	71	15.37%
Սոցիալական և առողջապահական բնագավառ	23	4.98%

2024թ.		
Կառույց	թիվ	%
ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ	71	24.24%
Ներքին գործերի նախարարություն	60	20.48%
Արդարադատության նախարարություն	36	12.29%
Սոցիալական և առողջապահական բնագավառ	26	8. 88%

Ինչպես երևում է պատկեր 1-ից, 2024 թ.-ին կազմակերպության կողմից ուղարկված տեղեկատվական հարցումներ առավել շատ ուղարկվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը (20.48%), Արդարադատության նախարարությանը (12,25%), ՀՀ Դատախազություն և նրա ստորաբաժանումներին (24,24%) և Սոցիալական և առողջապահական բնագավառի հաստատություններին (8,88%): Ըստ այդմ թվարկված մարմիններին ուղղված տեղեկատվության հարցումները կազմում են տեղեկատվական հարցումների 65,85%-ը:

2024թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 293 տեղեկատվական հարցումներից ժամանակին են ստացվել 203-ը (69.3%), ուշացած 61-ը (20.82%), իսկ 29 (9.9%) հարցման պատասխան չի տրվել:

Համեմատության համար նշենք, որ 2023թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից ժամանակին են ստացվել 306-ը (66.24%), ուշացած 100-ը (21.65%), և 56 (12.13%) հարցման պատասխան չի տրվել:

Այսինքն 2023 թվականի համեմատությամբ 2024 թվականին կազմակերպության տեղեկատվական հարցումներին ժամանակին պատասխանվածների տեսակարար կշիռը աճել է 3.06%-ով, ուշացրած պատասխանների տեսակարար կշիռն նվազել է 0.83%-ով, իսկ անպատասխան մնացած գրությունների տեսակարար կշիռը նվազել է 2.23%-ով: Եվ ինչպես տեսնում ենք աղյուսակներում կառույցների ցանկը փոփոխվել է ըստ այն կառույցների՝ որոնց ուղարկվել է ավելի մեծ թվով հարցումներ:

Պատկեր 1. 2023 և 2024թթ. Համեմատական դիագրամ





Արդարադատության նախարարություն

2024թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 293 տեղեկատվական հարցումներից 36-ը (12.29%) ուղղված է եղել արդարադատության նախարարությանը. (2023թ. այն կազմել է 5.2%) 2024թ.-ին արդարադատության նախարարությունից ժամանակին են ստացվել 32, ուշացված 3, և 1 հարցման պատասխան չի ստացվել: 2023թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 462 տեղեկատվական հարցումներից 24-ն (5.2%) է ուղղված եղել արդարադատության նախարարությանը. 2023թ.-ին արդարադատության նախարարությունից ժամանակին են ստացվել 18, ուշացված 2, և 4 հարցման պատասխան չի ստացվել:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	18	Ժամանակին	32
Ուշացած	2	Ուշացած	3
Չպատասխանված	4	Չպատասխանված	1

ՀՀ Ներքին գործերի նախարարություն և ենթակա ստորաբաժանումներ

2024 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 293 տեղեկատվական հարցումներից 60-ը (20,48%) ուղղված են եղել ՀՀ ներքին գործերի նախարարությանը և ենթակա ստորաբաժանումներին (2023թ. դրանք կազմել են 462 տեղեկատվական հարցումներից 71-ը 15,37%): 2024թ. ՀՀ ներքին գործերի նախարարությունից և ենթակա ստորաբաժանումներից «ժամանակին» ստացված հարցումների պատասխանները կազմել են 51.7% (2023թ. «ժամանակին» են ստացվել ուղարկված հարցումների 43,7%-ը): ՀՀ Ներքին գործերի նախարարությունը ժամանակին է պատասխանել ուղարկված 31 հարցումներին, 22 հարցման պատասխանել է ուշացված, իսկ 7 հարցման պատասխան չենք ստացել:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	30	Ժամանակին	31
Ուշացած	36	Ուշացած	22
Չպատասխանված	5	Չպատասխանված	7

ՀՀ Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ. ուղարկված 293 տեղեկատվական հարցումներից 13-ը (4.44%) ուղղված են եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ 2 մարզպետարանի և 11 համայնքապետարանի (2023թ.-ին վերոհիշյալ կառույցներին ուղարկվել են 462 տեղեկատվական հարցումներից 105-ը (22,73%): 2024թ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները ժամանակին պատասխանել են 13 հարցումներից 10-ին (77%): Ուշացած պատասխան չի եղել, և անպատասխան է մնացել 3 տեղեկատվական հարցում, պատասխան չտրամադրած մարմիններից 1-ը մարզպետարան է, իսկ մյուս 2-ը համայնքապետարաններ:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	83	Ժամանակին	10
Ուշացած	8	Ուշացած	0
Չպատասխանված	14	Չպատասխանված	3

ՀՀ Սոցիալական և առողջապահական բնագավառի մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ. ուղարկված 293 տեղեկատվական հարցումներից 26-ը (8.88%) ուղղված են եղել սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցներին (2023թ.-ին այն կազմել է 4.98%՝ 462 տեղեկատվական հարցումներից 23-ը): Ուղարկված հարցումներից 15-ին պատասխանել են ժամանակին, 9 հարցումներին ուշացած, և 2 հարցման պատասխան չենք ստացել:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	17	Ժամանակին	15
Ուշացած	4	Ուշացած	9
Չպատասխանված	2	Չպատասխանված	2

ՀՀ պաշտպանության նախարարություն և ստորաբաժանուներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ.-ին ուղարկված 293 տեղեկատվության հարցումներից 25-ը (8,54%) ուղղված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը և ստորաբաժանումներին (2023թ. այն կազմել է 17.97%՝ 462 տեղեկատվության հարցումներից 83-ը): 2024թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից և նրա ենթակառուցվածքներից «ժամանակին» են ստացվել 10, ուշացած 10, իսկ 5 հարցման պատասխան չենք ստացել: 2023թ.-ին 83 հարցումներից 34-ին պատասխանել են ժամանակին:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	34	Ժամանակին	10
Ուշացած	29	Ուշացած	10
Չպատասխանված	20	Չպատասխանված	5

ՀՀ Քննչական կոմիտե և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ-ին ուղարկված 293 տեղեկատվական հարցումներից 11-ը (3,76%) ուղարկվել է ՀՀ Քննչական կոմիտե (2023թ.-ին այն կազմել է (3,68%) 462 տեղեկատվական հարցումներից 17-ը): Ուղարկված տեղեկատվական հարցումներից ժամանակին ենք ստացել 10 ,ուշացած՝ 1, չպատասխանված հարցումներ ոչ՛ 2023թ. ոչ ՛ 2024թ. չեն եղել:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	15	Ժամանակին	10
Ուշացած	2	Ուշացած	1
Չպատասխանված	0	Չպատասխանված	0

ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ-ին 293 տեղեկատվական հարցումներից 71-ը (24,24%), ուղարկվել են ՀՀ դատախազություն և ստորաբաժանումներ (2023թ-ին այն կազմել է 15,37%-ը՝ 462 տեղեկատվական հարցումներից 71-ը): Ժամանակին են ստացվել 60, ուշացված՝ 6,իսկ 5 հարցման պատասխան չենք ստացել: 2023 թվականին հարցումներից ժամանակին են

ստացվել 62, ուշացված՝ 7, իսկ 2 հարցման պատասխան չենք ստացել:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	62	Ժամանակին	60
Ուշացած	7	Ուշացած	6
Չպատասխանված	2	Չպատասխանված	5

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ. ուղարկված 293 տեղեկատվության հարցումներից 3-ն (1.03%) ուղղված են եղել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը (2023թ.-ին այն կազմել է 4.55%, 462 տեղեկատվական հարցումներից 21-ը): 2024թ. ուղարկված 3 հարցումներից 1-ին պատասխանել են ժամանակին, 2-ին ուշացած:

2023թ.		2024թ	
Ժամանակին	13	Ժամանակին	1
Ուշացած	5	Ուշացած	2
Չպատասխանված	3	Չպատասխանված	0

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024թ. Ուղարկված 293 տեղեկատվության հարցումներից 2-ն (0,7 %) ուղղված են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (2023թ.-ին այն կազմել է 1,3% 462 տեղեկատվական հարցումներից 5-ը): Եվ 2023թ. և 2024թ. բոլոր հարցումներին պատասխանել են ժամանակին:

2023թ.		2024թ.	
Ժամանակին	5	Ժամանակին	2
Ուշացած	0	Ուշացած	0

Չպատասխանված 0	Չպատասխանված 0

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024 թվականին ուղարկված 293 տեղեկատվության հարցումներից 46-ն ուղարկվել են այլ կառույցների, մասնավորապես՝

- ՀՀ Վարչապետին ուղարկվել է 6 հարցում, որոնցից 4-ի պատասխանը ստացել ենք ժամանակին, մյուս 1-ը ուշացած,և 1-ին չի պատասխանվել
  - Չպատասխանված հարցումը վերաբերել է՝ Բերքաբեր և Կիրանց գյուղերում սահմանազատման ընթացքում քաղաքացիների սեփականության փոխհատուցման գումարի չափին
- ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին:
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ուղարկվել է 1 հարցում, որին պատասխանվել է ժամանակին
- ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չենք ստացել
  - Չպատասխանված հարցումը վերաբերել է՝ 2022-2023թթ.ի ընթացքում ՀՀ ԱՆ բոլոր Քրեակատարողական հիմնարկներում դատապարտված անձանց պատժի կրման պայմաններին:
- ՀՀ փաստաբանների պալատ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ուղարկվել է 2 հարցում, 1 հարցման պատասխան ստացվել է ժամանակին, իսկ 1-ի պատասխանը չի ստացվել
  - Չպատասխանված հարցումը վերաբերել է՝ կուսակցությունների ֆինանսական աուդիտին
- ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել
  - Չպատասխանված հարցումը վերաբերել է՝ դատապարտյալի նկատմամբ հարկադիր կատարման ծառայության կողմից ենթակա պարտավորությունների կատարմանը:
- ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- Բնակչության հատուկ սպասարկում համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ՀՈԱԿ ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ուշացած
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական հրդեհային անվտանգության տեսչական մարմին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ Դատական դեպարտամենտ ուղարկվել է 3 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- Էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողով ուղարկվել է 1 հարցում, որի

պատասխանը ստացվել է ժամանակին

- ՀՀ կառավարության «Հումանիտար կենտրոն» ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ պետական եկամուտների կոմիտե ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- Վանաձորի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Վանաձորի սպասարկում» ՀՈԱԿ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ նախագահին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ժամանակին
- ՀՀ Կենտրոնական բանկ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- ՀՀ նոտարական պալատ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած
- Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ վարչական դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին,
- Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել
    - Չպատասխանված հարցումը վերաբերել է՝ 2018-2022թթ. դատարանում դատավորների կազմին և գործավարությանը
- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չի ստացվել
    - Չպատասխանված հարցումը վերաբերել է՝ 2018-2022թթ. դատարանում դատավորների կազմին և գործավարությանը

Ամփոփելով 2024թ. պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվական հարցումներին տրված պատասխաններն ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների, բաժանել ենք չորս խմբի ըստ նրանց տրված պատասխանների ժամանակագրական ճշտապահության՝

2024թ.-ին բոլոր տեղեկատվական հարցումներին ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են՝

- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը
- ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը
- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը
- ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը
- ՀՀ փաստաբանների պալատը
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական հրդեհային անվտանգության տեսչական մարմինը
- ՀՀ Դատական դեպարտամենտը
- ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը
- Էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովը
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեն
- Վանաձորի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Վանաձորի սպասարկում» ՀՈԱԿ-ը
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը
- ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեն
- Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանը
- Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը
- Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը
- Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը

Համեմատության կարգով նշենք, որ 2023թ.-ին միայն ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են եղել՝

- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը
- ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը
- ՀՀ փաստաբանների պալատը
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը
- ՀՀ Կադաստրի կոմիտե
- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
- «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ

- ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
- ՀՀ Ֆինանսների նախարարություն
- Հայաստանի Ապահովագրողների բյուրո

Համեմատելով 2023 և 2024 թվականներին կազմակերպության կողմից տեղեկատվական հարցումներին ժամանակին պատասխան տրամադրած կառույցների ցանկը, նկատում ենք, որ հինգ կառույց կրկնվում է ցանկում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը: Նախորդ՝ 2022-2023թթ. համեմատ կառույցների ցանկն ավելացել է ևս մեկով:

2024թ.-ին ժամանակին և ուշացած պատասխաններ տրամադրած կառույցներն են՝

- ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը
- ՀՀ Քննչական կոմիտեն

Համեմատության կարգով նշենք 2023թ.- ին ժամանակին և ուշացած պատասխաններ տրամադրած միակ կառույցը եղել է՝

- ՀՀ Քննչական կոմիտեն

Նշենք, որ ինչպես 2023թ.-ին այնպես էլ 2024թ.-ին կազմակերպաության կողմից ՀՀ Վարչապետին ուղղված հարցումներից 1-ը մնացել է անպատասխան, մինչդեռ 2022թ.-ին Վարչապետին ուղղված 3 հարցումներից 2-ին պատասխանը ստացել ենք ուշացած, 1 հարցման պատասխանվել էր ժամանակին և չպատասխանված հարցումներ չեն եղել:

2024թ.-ին ժամանակին, ուշացած և պատասխաններ չտրամադրած կառույցներն են՝

- ՀՀ Վարչապետը
- ՀՀ Արդարադատության բնագավառի կառույցները
- ՀՀ Դատախազությունն իր ստորաբաժանումներով
- ՀՀ Սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցները
- ՀՀ Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները
- ՀՀ Ներքին գործերի նախարարությունն իր ենթակառուցվածքներով
- ՀՀ Պաշտպանության նախարարությունը
- ՀՀ Վարչական դատարանը
- ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը

Համեմատության կարգով նշենք, որ 2023թ.-ին ժամանակին, ուշացած և պատասխաններ չտրամադրած կառույցները եղել են՝

- ՀՀ Վարչապետը
- ՀՀ Արդարադատության բնագավառի կառույցները
- ՀՀ Դատախազությունն իր ստորաբաժանումներով
- ՀՀ Սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցները
- ՀՀ Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները
- ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը
- ՀՀ Ներքին գործերի նախարարությունն իր ենթակառուցվածքներով
- ՀՀ Պաշտպանության նախարարությունը
- ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը

Ինչպես տեսնում ենք և՛ ժամանակին, և՛ ուշացած, և՛ չպատասխանված գրությունների խմբում կառույցների ցանկը մասամբ կրկնվում է, և սա փաստում է այն մասին, որ կառույցները չեն վերանայում իրենց վերաբերմունքը տեղեկատվական հարցումներին պատասխանելու ժամանակագրության պահպանման վերաբերյալ:
2024թ.-ին ուշացած և պատասխաններ չտրամադրած կառույցներն են `

- ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունը
- Բնակչության հատուկ սպասարկում համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ՀՈԱԿ-ը
- ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը
- ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն
- Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական շտաբը
- ՀՀ կառավարության «Հումանիտար կենտրոն»-ը
- ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը
- ՀՀ նախագահը
- ՀՀ Կենտրոնական բանկը
- Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը
- Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը
- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը

Համեմատության կարգով նշենք, որ 2023թ.- ին ուշացած և պատասխան չտրամադրած կառույցը եղել է՝

- ՀՀ փոխվարչապետ
- ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը
- ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը
- ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտե
- Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական շտաբ

Այսպիսով, ՀՀ Գլխավոր դատախազությունը, արդարադատության ոլորտը և տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումներին ամենաշատ թվով ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են: Ընդհանուր առմամբ 2024 թվականին

Կազմակերպության կողմից տեղեկատվական հարցումներ ստացած կառույցների ցանկը համալվել և փոփոխվել է:

2024 թվականի վիճակագրական դիագրամ